

**«Արմավիրի մարզպետարանի միջազգային կապերի 2013թ. տարեկան ծրագրի կատարողական»**

h/h	Աշխատանքի ուղղությունը	Միջոցառման անվանումը		Միջոցառումների ժամկետները		Աշխատանքի կատարման արդյունքները
		նախատեսված	չնախատեսված, սակայն փաստացի կատարված	նախատեսված	փաստացի	
	1	2ա	2բ	3ա	3բ	4
1	<b>Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով կամ օտարերկրյա պետությունների և միջազգային կազմակերպությունների հետ համատեղ իրականացվող ծրագրերով՝ մարզպետարանի իրավասության ոլորտներին վերաբերող դրույթների և/կամ այլ փաստաթղթերի կատարում</b>					
1.1.	Հայաստանի Հանրապետության կառավարության և Ռուսաստանի Դաշնության կառավարության միջև կնքված միջազգային պայմանագրերի շրջանակներում	«Արմավիրի մարզպետն ընդունել է Հայ-Ռուսական միջտարածաշրջանային համագործակցության երրորդ համաժողովի շրջանակներում Հայաստան ժամանած ՌԴ Մոսկվայի, Սմոլենսկի, Սվերդլովսկի մարզերի պատվիրակություններին			2013թ. դեկտեմբերի 1-3	Համաժողովի շրջանակներում Արմավիրի մարզը համագործակցել է ՌԴ Մոսկվայի, Սմոլենսկի, Սվերդլովսկի մարզերի պատվիրակությունների հետ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել Մոսկվայի մարզի «Պիռո-Ռուս» ՍՊԸ գլխավոր տնօրենի հետ՝ Արմավիրի մարզում ընկերության մասնաճյուղի բացման հնարավորությունների ուղղությամբ, Սերգիեվ-Պոսադի առևտրաարդյունաբերական պալատի նախագահի հետ՝ Սերգիեվ-Պոսադում Արմավիրի մարզի գյուղատնտեսական արտադրանքի իրացման հնարավորությունների ուղղությամբ, Սմոլենսկի մարզի «Էլեկտրոլույզ» ինժեներական կենտրոն ՓԲԸ գլխավոր տնօրենի հետ՝ Էջմիածնի Ռաստր գործարանի հետ համագործակցության ուղղությամբ:

1.2.	Տնտեսական համագործակցության հարցերով հայ-իրաքյան միջկառավարական համատեղ հանձնաժողովի երկրորդ նիստի շրջանակներում		ՀՀ Արմավիրի մարզպետ Ա. Ղահրամանյան ն ընդունել Հայաստանում գտնվող իրաքյան գործարար Ջալալ Իբրահիմ Կարիմին		2013թ. նոյեմբերի 8	Գործարարը Արմավիրի մարզպետարանում հանդիպել է մարզի չրարտադրողների հետ, ծանոթացել վերջիններիս կողմից արտադրվող չրատեսակներին: Իրաքյան գործարարին ներկայացվել են տարբեր անուշահամ մրգերից և հատապտուղներից պատրաստված չրեր՝ առանց հավելանյութերի, բարձր որակական հատկանիշներով և ապրանքային գեղեցիկ տեսքով: Ջալալ Իբրահիմ Կարիմը հետաքրքրվել է սալորի և ծիրանի չրերի արտադրության ծավալով ու շուկայական արժեքով՝ խոստանալով վերլուծել առաջարկվող պայմանները և նպատակահարմարության դեպքում փոխգործակցություն սկսել: Մարզի չրարտադրողները ևս փոխշահավետ գործակցության պատրաստակամություն են հայտնել:
2	<b>Օտարերկրյա պետությունների տարածքային միավորների հետ համաձայնագրի կամ այլ փաստաթղթերի/ծրագրերի կնքում և կատարում</b>					
2.1.	ՀՀ Արմավիրի մարզի և Բելառուսիայի Հանրապետության Գոմելի մարզի միջև		Արմավիրի մարզ է այցելել Բելառուսիայի Հանրապետության ն Գոմելի մարզային գործադիր կոմիտեի նախագահի տեղակալ Բոլեսլավ Պիրշտուկի գլխավորած պատվիրակությունը		2013թ. մարտի 19	Ստորագրվել է արձանագրություն՝ երկկողմ համագործակցության մտադրությունների մասին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել հաստատել բարեկամական հարաբերություններ և ներդնել անհրաժեշտ ջանքեր փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում երկարաժամկետ համագործակցության շրջանակների ընդլայնման և խորացման համար: Մարզպետին փոխանցվել է իր պաշտոնակցի իրավերը՝ 2013թ. մայիս ամսին Գոմելի մարզ այցելելու և մասնակցություն ունենալու տարածաշրջանում 10-րդ տնտեսական համաժողովին, ինչպես նաև «Գարունը Գոմելում» 4-րդ միջազգային ցուցահանդես-տոնավաճառին: Արմավիրի մարզի մի շարք համայնքներում մայիսի 12-ի կարկտահարության հետևանքով ստեղծված արտակարգ իրավիճակի պատճառով մարզպետի այցը Բելառուսի Հանրապետության Գոմելի մարզ ենթաձգվել է:

2.2.	<p>«Արմավիրի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգի միջև համագործակցության շարունակում»</p>	<p>25.06.2009թ. կնքված համագործակցության վերաբերյալ փոխըմբռնան հուշագրի շրջանակներում «Արմավիրի մարզպետն ընդունել է Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան Ատրպատականի նահանգապետ Վահիդ Զալալզադեի գլխավորած պատվիրակությանը»</p>		<p>Տարվա ընթացքում</p>	<p>2013թ. հոկտեմբերի 7</p>	<p>Մարզպետի ուղեկցությամբ պատվիրակությունն այցելել է մարզի մի շարք արտադրական ընկերություններ, մասնավորապես՝ ջերմոցային շամպինիոնների արտադրող զբաղվող «Բիգա» հայ-իռանդական համատեղ ձեռնարկությունում, բարձրակազ դռներ արտադրող «ՀԻՄՊԵՐԻԱԼ-ՏՈՒՐ» ընկերությունում և «Նոյան» բնական հյութերի գործարանում՝ ծանոթանալով արտադրական հնարավորություններին և իրացման շուկային: Պատվիրակությունը եղավ նաև «Հայ միասնության խաչ» բարեգործական հասարակական կազմակերպությունում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել մարզկենտրոն Արմավիրում Արևմտյան Ատրպատականի նահանգը ներկայացնող առևտրային համալիր հիմնելու և Արմավիրի մարզը ներկայացնող նույնատիպ համալիր Արևմտյան Ատրպատականի Ուրմիա քաղաքում հիմնելու մասին:</p>
2.3.	<p>«Արմավիրի մարզի Արմավիրի քաղաքապետարանի առաջարկությունը՝ Լատվիայի Հանրապետության Բեզեկնե քաղաքային համայնքի հետ փոխհամաձայնության հուշագիր կնքելու պատրաստականության վերաբերյալ»</p>		<p>Տնտեսական, արդյունաբերական, գիտական և տեխնիկական համագործակցության Հայ-լատվիական միջկառավարական հանձնաժողովի 1-</p>		<p>2013թ. օգոստոս</p>	<p>Արմավիր քաղաքային համայնքը հայտնել է իր պատրաստականությունը փոխհագործակցության հուշագրի ստորագրել Լատվիայի Հանրապետության Բեզեկնե քաղաքային համայնքի հետ և համագործակցել տարածաշրջանի զարգացման, տեղական ինքնակառավարման մարմինների և շրջակա միջավայրի պահպանության ոլորտներում:</p>
2.4.	<p>Սլովակիայի Հանրապետության Տոնավայի երկրամասի և «Արմավիրի մարզի միջև համագործակցություն»</p>	<p>24.04.2009թ. կնքված առևտրատնտեսական և գիտատեխնիկական մշակութային համագործակցության համաձայնագրի, 2012թ. կնքված նախնական պայմանագրի շարունակում</p>			<p>2013թ. ապրիլի 24</p>	<p>Արմավիրի մարզ է այցելել Սլովակիայի Հանրապետության Տոնավայի երկրամասի նահանգապետ Տիբոր Միկուշի գլխավորած պատվիրակությունը: Ստորագրվել է համագործակցության հուշագրի Արմավիրի մարզի և ՍՀ Տոնավայի նահանգի առևտրարդյունաբերական պալատների նախագահների միջև՝ առևտրատնտեսական ոլորտում փոխգործակցության վերաբերյալ:</p>

2.5.	<p>Սլովակիայի Հանրապետության Տոնավայի երկրամասի և ՀՀ Արմավիրի մարզի միջև համագործակցություն</p>	<p>24.04.2009թ. կնքված առևտրատնտեսական և գիտատեխնիկական մշակութային համագործակցության համաձայնագրի, 2012թ. կնքված նախնական պայմանագրի շարունակում</p>			<p>2013թ. սեպտեմբերի 5-8</p>	<p>Արմավիրի մարզպետը այցելել է Տոնավայի երկրամաս: Այցի շրջանակներում տեղի են ունեցել մի շարք հանդիպումներ «Եվրոպական հայերի ֆորում» կազմակերպության ակտիվիստների և տեղի գործարարների հետ: Քննարկվել են Եվրոպական երկրների հայկական համայնքների հետ հետագա համագործակցության, դրանց ուղղությունների և այդ կապակցությամբ ձեռնարկվելիք քայլերի վերաբերյալ մի շարք հարցեր: Տոնավայի երկրամասի նահանգապետի հետ հանդիպման ժամանակ տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ձեռք են բերվել պայմանավորվածություններ կնքված պայմանագրի շրջանակներում երկու մարզերի տնտեսական համագործակցության ընդլայնման և այդ կապակցությամբ ձեռնարկվելիք միջոցառումների վերաբերյալ, որոնք կքննարկվեն ստեղծված աշխատանքային խմբերի կողմից: Մասնավորապես՝ Սլովակիայի Հանրապետության ՉՍՄ և ԷԿՁԵՄ բանկերի տնօրենների և Բոնոյի տրակտորներ արտադրող «ՁԵՏՈՒ» գործարանի ֆինանսական տնօրենի հետ հանդիպման ժամանակ ձեռք է բերվել վերջնական պայմանավորվածություն՝ բանկերի կողմից 5 մլն. եվրո վարկի տրամադրման համար, որով Արմավիրի մարզ կներկրվեն տվյալ գործարանի կողմից արտադրվող բարձր արտադրողականությամբ, տեխնիկական և որակական հատկանիշներով Եվրոպայում հայտնի տրակտորներ, գյուղատնտեսական գործիքներ, ինչպես նաև կկառուցվեն դրանց սպասարկման համար անհրաժեշտ կայաններ:</p>
------	---	---	--	--	------------------------------	---

2.6.	Սլովակիայի Հանրապետության Տոնավայի երկրամասի և ՀՀ Արմավիրի մարզի միջև համագործակցություն	24.04.2009թ. կնքված առևտրատնտեսական և գիտատեխնիկական մշակութային համագործակցության համաձայնագրի, 2012թ. կնքված նախնական պայմանագրի շարունակում			2013թ. սեպտեմբերի 26	<p>ՀՀ Արմավիրի մարզպետն ընդունել է Սլովակիայի Հանրապետությունից ժամանած գործարար Պավել Կոստյակին: Գործարարը Արմավիրի մարզում էր գյուղմթերքի վերամշակմամբ զբաղվող ընկերությունների կողմից առաջարկվող արտադրատեսակներին ծանոթանալու և փոխգործակցություն սկսելու նպատակով: Ներկայացվել են «Լևոն» ՍՊԸ-ի, «Բարիք Պ» ՓԲԸ-ի, Ա/Ձ Շիրակ Այվազյանի և «Արարատ» սննդի կոմբինատի կողմից առաջարկվող հիմնական արտադրատեսակները. տարբեր մրգերից պատրաստված հյութեր, մուրաբաներ, ջեմեր, չրեր և թեյեր՝ հայկական ավանդական բուսատեսակների պարունակությամբ: Սլովակ գործարարը պատրաստակամություն է հայտնել աջակցելու ներկայացված արտադրատեսակների արտահանման և իրացման նոր շուկաներ գտնելու ուղղությամբ:</p>
2.7.	Իրանի Իսլամական Հանրապետության Արևելյան Ատրպատականի նահանգի հետ կնքված փոխըմբռնման հուշագիր	Մարզամշակութային համատեղ ծրագրերի շարունակում, տնտեսական համագործակցության պայմանագրերի կնքում, փոխադարձ այցելություններ				<p>Նախատեսված ծրագրերը հետաձգվել են 2014 թվականին իրականացնելու պայմանով: Հետաձգումը պայմանավորված է եղել 2013թ. տեղացած կարկտահարության հետևանքով մարզին պատճառված վնասների վերացման հետ:</p>
2.8.	ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Յարոսլավլի մարզի միջև կնքված համաձայնագիր	Յարոսլավլի մարզի կառավարության և ՀՀ Արմավիրի մարզպետարանի միջև 2008 թ. նոյեմբերին կնքված առևտրատնտեսական, գիտատեխնիկական և մշակութային համագործակցության համաձայնագրի շրջանակներում փոխադարձ այցելություններ				<p>Նախատեսված ծրագրերը հետաձգվել են 2014 թվականին իրականացնելու պայմանով: Հետաձգումը պայմանավորված է եղել 2013թ. տեղացած կարկտահարության հետևանքով մարզին պատճառված վնասների վերացման հետ:</p>

3	<p>Աշխատանքային ուսուցողական ճանաչողական այցեր օտարերկրյա պետությունների տարածքային միավորներ և միջազգային կազմակերպություններ, մարզ այցելող օտարերկրյա պետությունների տարածքային միավորների, միջազգային կազմակերպությունների պաշտոնատար անձանց ընդունում և ձեռք բերված պայմանավորվածությունների իրականացում</p>					
3.1.					2013թ. մարտի 15	<p>Դեսպանն հայտնել է իր պատրաստակամությունը Արմավիրի մարզի և Միացյալ Թագավորության որևէ նահանգի միջև կապեր հաստատելու գործում: Պայմանավորվածություն է ձեռք բերվել 2013թ. աշնանը բրիտանական դեսպանատան կողմից կազմակերպվող ֆորումին մարզպետի մասնակցության վերաբերյալ, որն էլ կխթանի հետագա համագործակցությունը:</p>
3.2.	<p>ՀՀ Արմավիրի մարզի և Մեծ Բրիտանիայի որևէ նահանգի միջև համագործակցություն</p>		<p>ՀՀ Արմավիրի մարզպետն ընդունել է Հայաստանում Մեծ Բրիտանիայի արտակարգ և լիազոր դեսպան Ջոնաթան Էյվսին</p>		2013թ. հոկտեմբերի 23	<p>Մարզպետը ներկայացրել է պետական մակարդակով և մասնավոր հատվածի կողմից մարզում իրականացված ներդրումային ծրագրերը և առաջիկա անելիքները: Դեսպանը հետաքրքրվել է մարզի արտադրական ներուժով, արտադրանքի իրացման հարցերով, գյուղատնտեսության ոլորտում գրանցած ցուցանիշներով ու ոլորտի զարգացման հեռանկարով և պատրաստակամություն հայտնեց համագործակցելու և փոխգործակցության ուղիներ գտնելու ուղղությամբ:</p>

3.3.	<p><b>ՀՀ Արմավիրի մարզի և Իրանի Իսլամական Հանրապետության Արևմտյան և Արևելյան Ատրպատականի նահանգների հետ համագործակցության շրջանակներում</b></p>		<p>ՀՀ Արմավիրի մարզպետն ընդունել է Հայաստանում Իրանի Իսլամական Հանրապետության ն արտակարգ և լիազոր դեսպան Մոհամմադ Ռեյխին</p>		<p>2013թ. հունիսի 18</p>	<p>Դեսպանը նշել է, որ կողմերի միջև ստորագրված փոխըմբռնման հուշագրերով նախատեսվող համագործակցության զարգացմանն ու ընդլայնմանը նոր լիցք կհաղորդի բիզնես համաժողով անցկացնելու նպատակով Թեհրանի առևտրաարդյունաբերական պալատի նախագահի գլխավորած պատվիրակության այցը Հայաստանի Հանրապետություն, որին դեսպանի կողմից մասնակցության հրավեր ստացան մարզպետը և Արմավիրի առևտրաարդյունաբերական պալատի նախագահը: Քննարկվել են նաև գյուղատնտեսության ոլորտում երկկողմ հետաքրքրություն ներկայացնող ծրագրեր իրականացնելուն վերաբերող հարցեր:</p>
4	<p><b>Բազմակողմ և այլ միջոցառումներ</b></p>					
4.1.	<p>ՀՀ Արմավիրի մարզպետ Աշոտ Ղահրամանյանի այցը ՌԴ Եկատերինբուրգ քաղաք և Սվերդլովսկի նահանգ</p>				<p>2013թ. հոկտեմբերի 12</p>	<p>Մարզպետը ներկա է գտվել Աք. Կարապետ եկեղեցու օծման արարողությանը, որն հանդիսապետել է Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք և Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նույն օրը մարզպետը Սվերդլովսկի նահանգապետարանում ներկա է գտնվել Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Սվերդլովսկի նահանգապետ Եվգենի Կույվաշևի հանդիպմանը, որի ընթացքում անդրադարձ է կատարվել նաև ՀՀ Արմավիրի մարզի և ՌԴ Սվերդլովսկի նահանգի միջև ձևավորված հարաբերությունների խթանմանը վերաբերվող հարցերին:</p>

4.2.	ԳԴՀ արտակարգ և լիազոր դեսպան Ռայներ Մորելի այցը Արմավիրի մարզի Սարդարապատ համայնքի միջնակարգ դպրոց		Սարդարապատ համայնքի միջնակարգ դպրոցի և Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնյա Անհատ նահանգի Հալե քաղաքի Հանս Քրիստիան Ռայլի անվան գիմնազիայի հետ համագործակցության շարունակում		2013թ. հոկտեմբերի 23	Սարդարապատ համայնքի միջնակարգ դպրոցն արդեն չորրորդ տարին է, ինչ համագործակցում է Գերմանիայի Դաշնային Հանրապետության Սաքսոնյա Անհատ նահանգի Հալե քաղաքի Հանս Քրիստիան Ռայլի անվան գիմնազիայի հետ: Այս տարիներին իրականացվել են փոխայցելություններ, կրթական ծրագրեր, որոնք նպաստել են ձևավորված հարաբերությունների ամրապնդմանն ու ընդլայնմանը: 2012թ. սեպտեմբերի 27-ից կրթօջախում մեկնարկել է «Գերմաներեն լեզվի դիպլոմ» ծրագիրը, որի շրջանակներում դպրոցի սաները հանձնելով քննություններ գերմաներեն լեզվով՝ հնարավորություն կունենան ուսումը շարունակելու ԳԴՀ բարձրագույն ուսումնական հաստատություններում: 2013թ. կրթօջախի շրջանավարտներից 16-ը, բարեհաջող հանձնելով գերմաներեն լեզվի բանավոր և գրավոր քննությունները, արժանացել են B1 և A2 կարգի դիպլոմների՝ հնարավորություն ստանալով կրթությունը շարունակելու ԳԴՀ-ում:
4.3.	ՀՀ Արմավիրի մարզի և մարզում ծրագրեր իրականացնող միջազգային կազմակերպությունների միջև համագործակցություն	Համագործակցության շարունակում Հայաստանի Մանուկներ հիմնադրամի (COAF) հետ			2013թ.	«ԱրմենՏել» ընկերության հետ համատեղ Լեռնագոգ, Քարակերտ և Դալարիկ համայնքների բարեկարգման աշխատանքների իրականացում: Տարբեր ոլորտային զարգացման ծրագրերի իրականացում Բաղրամյանի տարածաշրջանի համայնքներում:
4.4.		Համագործակցության շարունակում «Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության հետ			2013թ.	«Քաունթերփարթ ինթերնեշնլ» կազմակերպության համաֆինանսավորմամբ իրականացվել են Ծիածան համայնքի մշակույթի տան հիմնանորոգում և կահավորում, ինչպես նաև մի շարք միջոցառումներ ծրագրի շահառու Լուկաշին և Ծիածան համայնքների մասնակցությամբ:



4.5	Համագործակցություն ԱՄՆ ՄՁԳ-ի «Մաքուր էներգիա և ջուր» ծրագրի հետ			2013թ.	Ծրագրի և Հայաստանի մանուկներ հիմնադրամի (COAF) հետ համատեղ մարզի Լեռնագոգ համայնքում իրականացվել է գլխավոր փողոցի արտաքին լուսավորության էներգաարդյունավետ համակարգի տեղադրման ծրագիրը: Ծրագրի, «Նոր Ակունք» ՓԲԸ-ի և համայնքային միջոցներով Մրգաշատ և Դալարիկ համայնքներում իրականացվել է խմելու ջրամատակարարման համակարգերի բարելավման ծրագիրը:
4.6	Գերմանիայի «Paulchen-Esperanze-Stiftung» հիմնադրամի հետ			2013թ.	Հիմնադրամի միջոցներով մարզի «Արմավիրի Վարդան Բախշյանի անվան թիվ 2 հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի հասցեով ստացվել են թվով 202 համակարգչային սարքավորումներ: